ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» դեկտեմբերի 2024թ. № 1172

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 89-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 157 – Ա որոշումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28032024-06-0073 վկայականը՝ ***որոշում եմ.***

1. «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Խնկոյան փողոց 134 հողամաս» հասցեում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0490-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,34471 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

2. Հայաստանի Հանրապետության հետ կնքել նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 9
ք.Սպիտակ